ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՍՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր. գ. թ., դոցենտ Թավադյան Ա.Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քաղաքացիական իրավունք (հատուկ մաս)

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

(հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Քաղաքացիական իրավունք (հատուկ մաս)» ուսումնական առարկան նվիրված է քաղաքացիական իրավունքի ոլորտում տեսական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությանը, այդ թվում՝ հիմնարար դոկտրինալ մեկնաբանությունների, հիմնարար քաղաքացիական իրավունքի ինստիտուտների, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի ոլորտում իրավակիրառ հարցերի ուսումնասիրությանը: Առարկայի ուսումնասիրության ընթացքում ուսանողները ծանոթանում են քաղաքացիական հարաբերությունները կարգավորող ներպետական օրենսդրությանը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի ոլորտում առկա արդի հիմնահարցերին:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի **նպատակն** է ուսանողին ծանոթացնել քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման առանձնահատկություններին, ի մասնավորի՝ գույքի սեփականության իրավունքի, օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրերին, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագրերին և այլն՝ տրամադրելով բազմակողմանի իրավական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ քաղաքացիաիրավական ոլորտում, ըստ այդմ՝ հետագայում ապահովելով շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ **խնդիրները**. ներկայացնել

- ✓ Առուվաճառքի պայմանագիրը,
- ✓ Փոպանակության պայմանագիրը,
- ✓ Ռենտայի պայմանագիրը,
- ✓ Նվիրատվության պայմանագիրը,
- ✓ Վարձակալության պայմանագիրը,
- ✓ Անհատույց օգտագործման պայմանագիրը,

- ✓ Կապալի պայմանագիրը,
- ✓ Ծառայությունների մատուցման պայմանագիրը,
- ✓ Հանձնարարության պայմանագիրը,
- ✓ Կոմիսիայի պայմանագիրը,
- ✓ Գործակալության պայմանագիրը,
- ✓ Պահատվության պայմանագիրը,
- ✓ Փոխադրման պայմանագիրը,
- ✓ Տրանսպորտային առաքման պայմանագիրը,
- ✓ Ֆինանսական պայմանագրերը:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը. Գույքային ինքնուրույնություն ունեցող իրավահավասար սուբյեկտների կամահայտնությամբ առաջացող ապրանքադրամական բնույթի գույքային հարաբերությունները՝ գույքային հարաբերությունների հետ կապված, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև գույքային հարաբերությունների հետ չկապված անձնական ոչ գույքային հարաբերությունները:

Դասընթացի առարկան. Քաղաքացիական իրավունքի գիտության ուսումնասիրությունների արդյունքների, մշակած տեսական դրույթների, կատեգորիաների, հիմնավորումների հիմքով քաղաքացիական իրավունքի էության, առանձնահատկությունների, քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգերի, քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի դերի ու նշանակության պարզաբանում, ինչպես նաև քաղաքացիաիրավական ոլորտի իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ուսումնասիրություն:

Դասընթացի մուտքային պահանջները.

Հայերենի գերազանց իմացություն, գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ: Ցանկալի է, որպեսզի ուսանողները, սկսելով դասընթացի ուսումնասիրությունը, ունենան պետության և իրավունքի հիմունքների վերաբերյալ բազային գիտելիքներ և հմտություններ, քաղաքացիական իրավունքի հատուկ մասի վերաբերյալ գիտելիքներ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները պետք է.

իմանան՝

- Գույքի սեփականության իրավունքի փոխանցման պայմանագրերը,
- Գույքի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրերը,
- Աշխատանքների կատարման պայմանագրերը,
- Ծառայությունների մատուցման պայմանագրերը:

կարողանան՝

· պատկերացում ունենալ ՀՀ քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունների բնույթի վերաբերյալ,

· ինքնուրույն գնահատել ՀՀ քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավական կարգավիճակը,

· ընկալել ՀՀ քաղաքացիական իրավունքի կարգավորման նշանակությունը,

ունակ լինեն՝

· ինքնուրույն կիրառել քաղաքացիաիրավական օրենսդրությունը,

· իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստական հանգամանքներին,

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Քաղաքացիական հարաբերությունների կարգավորմանը վերաբերող արդիական, տեսական խորացված գիտելիքներ, ոլորտում առկա նորագույն տեսությունների, հայեցակարգերի իմացություն: Ի մասնավորի՝ համապարփակ գիտելիքներ գույքի սեփականության իրավունքի, օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրերի, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագրերի վերաբերյալ:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Կարող է ինքնուրույն իրավական գնահատական տալ ՀՀ քաղաքացիական իրավահարաբերությունների էությանը:
2. Կարող կիրառել քաղաքացիաիրավական ոլորտի նորմատիվ իրավական ակտերը:

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Կարող է ընկալել ՀՀ քաղաքացիական իրավունքի կարգավորման նշանակությունը:
2. Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը և պայմանագրերը՝ պատկերացում ունենալով ՀՀ քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունների բնույթի վերաբերյալ:
3. Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ՝ ձևավորելով նորարարական մտածողություն և նորարարական գործունեություն ծավալելու կարողունակություն:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը***

1. Ունակ է ինքնուրույն կիրառել քաղաքացիաիրավական օրենսդրությունը:
2. Ունակ է իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստական հանգամանքներին քաղաքացիաիրավական ոլորտում:
3. Ունակ է ցիվիլիստիկայի ոլորտում տալ որակյալ իրավական խորհրդատվություն և եզրակացություններ:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասավանդման եղանակները և մեթոդները: Սույն առարկայի շրջանակներում կիրառվում են հետևյալ ժամանակակից դասավանդման եղանակները և մեթոդները՝ տեսական նյութի բացատրություն, գործնական աշխատանքներ, բանավոր քննարկումներ, անհատական աշխատանքներ, քեյս-ստադի, դատախաղ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ **8 ակադեմիական կրեդիտ (288 ակադեմիական ժամ)** աշխատատարությամբ, որից **24** ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել **3-րդ ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակներում**:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	288
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	44
1.1.1. Դասախոսություններ	20

1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	24
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	231
1.2.1. Քննություններին նախապատրաստում	131
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	100
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	70
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	30
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**(1կիսամ.) Stugarq gnahatakanov(2կիսամյակ) քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Առուվաճառքի պայմանագիր	6	1	1
Թեմա 2. Փոխանակության պայմանագիր	6	1	1
Թեմա 3. Ռենտայի պայմանագիր	4	1	1
Թեմա 4. Նվիրատվության պայմանագիր	4	1	1

Թեմա 5 Վարձակալության պայմանագիր	4	2	2
Թեմա 6 Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր	4	1	2
Թեմա 7 Կապալի պայմանագիր	4	1	2
Թեմա 8 Ծառայությունների մատուցման պայմանագիր	4	1	2
Թեմա 9 Հանձնարարության պայմանագիր	4	2	2
Թեմա 10 Կոմիսիայի պայմանագիր	4	2	2
Թեմա 11 Գործակալության պայմանագիր	4	1	2
Թեմա 12 Պահատվության պայմանագիր	4	1	1
Թեմա 13 Փոխադրումներ	4	1	1
Թեմա 14 Փոխառության պայմանագիր և վարկ	4	2	2
Թեմա 15 Բանկային հաշիվ և ավանդ	4	1	2
Ընդամենը	**44**	**20**	**24**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Առուվաճառքի պայմանագիր

1. Առուվաճառքի պայմանագրի ընդհանուր դրույթները,
2. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր,
3. Առուվաճառքի պայմանագրի այլ տեսակներ:

Թեմա 2. Փոխանակության պայմանագիր

1. Փոխանակության պայմանագրի ընդհանուր բնութագիրը

Թեմա 3. Նվիրատվության պայմանագիր

1. Նվիրատվության պայմանագրի ընդհանուր դրույթները,
2. Նվիրաբերության պայմանագիր

Թեմա 4. Ռենտայի պայմանագիր

1.Ռենտայի պայմանագրի ընդհանուր դրույթները,

2. Մշտական ռենտա

3. Ցմահ ռենտա

Թեմա 5 Վարձակալության պայմանագիր

1. Վարձակալության պայմանագրի ընդհանուր դրույթները,
2. Անշարժ գույքի վարձակալության առանձնահատկությունները,
3. Վարձակալության պայմանագրի այլ տեակներ:

Թեմա 6 Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր

1. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի ընդհանուր բնութագիրը

Թեմա 7 Կապալի պայմանագիր

1. Կապալի պայմանագրի ընդհանուր դրույթները,

2. Շինարարական կապալի պայմանագիր,

3. Կապալի այլ տեսակներ:

Թեմա 8 Ծառայությունների մատուցման պայմանագիր

1. Ծառայությունների մատուցման պայմանագրի ընդհանուր դրույթները

Թեմա 9 Հանձնարարության պայմանագիր

1. Հանձնարարության պայմանագրի ընդհանուր բնութագիրը

Թեմա 10 Կոմիսիայի պայմանագիր

1. Կոմիսիայի պայմանագրի ընդհանուր բնութագիրը

Թեմա 11 Գործակալության պայմանագիր

1. Գործակալության պայմանագրի ընդհանուր բնութագիրը

Թեմա 12 Պահատվության պայմանագիր

1. Պահատվության պայմանագրի ընդհանուր դրույթները

Թեմա 13 Փոխադրումներ

1. Փոխադրումների իրավական կարգավորումը

Թեմա 14 Փոխառության պայմանագիր և վարկ

1. Փոխառության պայմանագրի ընդհանուր բնութագիրը
2. Վարկային պայմանագրի ընդհանուր բնութագիրը

Թեմա 15 Բանկային հաշիվ և ավանդ

1. Բանկային հաշվի պայմանագիր
2. Բանկային ավանդի պայմանագիր

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Առուվաճառքի պայմանագրի ընդհանուր բնութագիրը և տարրերը
2. Առուվաճառքի պայմանագիր: Ապրանքի քանակը, տեսականին, կոմպլեկտայնությունը, կոմպլեկտը, տարա և փաթեթ

3. Առուվաճառքի պայմանագիր: Ապրանքի որակը /երաշխիքային ժամկետ, պիտանելիության ժամկետ/
4. Մանրածախ առուվաճառքի պայմանագիրը
5. Մատակարարման պայմանագրի հասկացությունը
6. Պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր
7. Էներգամատակարարման պայմանագիր
8. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր
9. Փոխանակության պայմանագիր
10. Նվիրատվության պայմանագիր
11. Ռենտայի պայմանագիր
12. Վարձակալության պայմանագրի հասկացությունը և տարրերը
13. Վարձույթի պայմանագիր
14. Կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցմամբ տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագիր
15. Առանց կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցման տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագիր
16. Շենքերի և շինությունների վարձակալություն
17. Բնակելի տարածության վարձակալության առանձնահատկությունները
18. Ֆինանսական վարձակալության պայմանագիր /Լիզինգ/
19. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի հասկացությունն ու տարրերը
20. Աշխատանքներ կատարելու պայմանագրեր /Կապալի պայմանագիր/
21. Կենցաղային կապալ
22. Շինարարական կապալ
23. Նախագծային և հետազոտական աշխատանքների կատարման կապալ
24. Պետական կարիքների համար աշխատանքների կատարման կապալ
25. Գիտահետազոտական աշխատանքների և փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրեր
26. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր

27. Հանձնարարության պայմանագիր

28. Կոմիսիայի պայմանագիր

29. Գործակալության պայմանագիր

30. Պահատվության պայմանագիր

31. Պահեստային պահատվության պայմանագիր

32. Բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրման պայմանագիր

33. Տրանսպորտային առաքման պայմանագիր

34. Փոխառության պայմանագիր

35. Վարկային պայմանագիր

36. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր (ֆակտորինգ)

37. Բանկային հաշվի պայմանագիր

38. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր

39. Ֆոնդի կառավարման պայմանագիր

40. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագիր (Ֆրանչայզինգ)

41. Ապահովագրությունը և դրա տեսակները

42. Ապահովագրության պայմանագիր

43. Համատեղ գործունեության պայմանագիր

44. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ (Պարգև վճարելու պարտականությունը, Հրապարակային մրցույթ կազմակերպելը, Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ)

45. Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ

46. Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը

47. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

48. Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

ՀՀ Քաղաքացիական իրավունք. Երկրորդ մաս, Երևան, խմբ. Տ.Բարսեղյան, Գ. Ղարախանյան. 2008.

Ռոլֆ Քնիպեր, Վահրամ Ավետիսյան, Գրիգոր Բեքմեզյան, Արսեն Թավադյան, Սիմոն Ֆարմանյան, Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք լուծումներով, Երևան, Տիգրան Մեծ, 2017, 240 էջ:

Գույքի օտարման պայմանագրեր, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2017թ.:

Քաղաքացիական իրավունք. Գործնական պարապմունքների ձեռնարկ. Առաջին մաս. Գ.Բեքմեզյան, Գ.Ղարախանյան, Դ.Սերոբյան և մյուսներ. 2007:

Գործարարական իրավունք, Երևան, Տ.Բարսեղյան. 2009. Гражданское право. Под ред. Алексеева С.С. 3-е изд., перераб. и доп. - М.: 2011.

М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Общие положения. М., 2007.

Гражданское право. Учебник в 4-х томах. Под ред. А.П. Сергеева. М., 2010.

Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. М., 2010.